որոշումներով հաստատվեց ու համաճարակները, ավարտվել է կարգ տեղերից մեկը։ Մեզ օգ-
վավերացվեց բժշկության կան- դրանց դեմ խաղաղ պատերազմը։ նության է եկել ռեանիմատոլո-

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԻՍԿԱՆ

ԱՐՎԵՍՏԻ ԲԱԺՆԻ ՄԵԿ ՕՐՎԱ ՓՈՍՏԻՑ

ԺԱՌԱՆԳԵԼ ԵՆ ՄԵԶ, ԿԺԱՌԱՆԳԵՆՔ ՄԵՆՔ ԵՎ

ՊԵՂՈՒՄՆԵՐ ՎԱՀԱՆԱՎԱՆՔՈՒՄ

Պատմական Սյունիքի գեղատեսիլ անկյուններից մեկում է գտնվում Վահանավանքը՝ միջնադարյան Հայաստանի ինքնատիպ կոթողներից մեկը։ Արդեն մոտ 15 տարի է, սկսած 1966 թվականից, որ այստեղ հնագիտական պեղումներ է կատարում ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը՝ պատմական գիտությունների թեկնածու Գ. Գրիգորյանի ղեկավարությամբ։

Պեղումները հիմնականում կատարվում են Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի ուսանողների հետ, որոնք այստեղ անց են կացնում իրենց ուսումնաարտադրական պրակտիկան։ Մաքրման աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են բազմաթիվ վիմական արձանագրություններ, որոնք մեծ նշանակություն ունեն միջնադարյան Հայաստանի պատմության ուսումնասիրության համար։ Գտնվել են երկրագործական իրեր, հասարակ և ջնարակված խեցեղեն, ինչպես նաև երկու մետաղաձուլական վառարան։

Վահանավանքի դամբարաններից հանված գանգերի հիման վրա բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անդրանիկ Ճաղարյանը վերականգնել է Սյունիքի թագավորների և իշխանազունների դիմանկարները։

Պեղումների աշխատանքին մշտապես օգնություն են ցույց տալիս նաև պիոներ-դպրոցականները։

Վահանավանքը, որ հայ ճարտարապետության լավագույն նմուշներից է, որոշված է ամբողջապես վերականգնել։

Վերականգնումից հետո նախատեսվում է այնտեղ բացել Ղափանի երկրագիտական թանգարանի մասնաճյուղ։

Այժմ Վահանավանքում լայն թափով շարունակվում են վերականգնման աշխատանքները։

ԱՐԹՈՒՐ ՍԱՂՈՅԱՆ
Արշավախմբի անդամ

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐՔԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻՑ

ՆԿԱՐՉԻ ՀԵՏ ԴԵՄ-ԴԻՄԱՑ

Անհամբերությամբ էինք սպասում այն օրվան, երբ մեր դասախոսի՝ Մ. Տեր-Հովհաննիսյանի հետ նկարչի տուն պիտի գնայինք՝ հանդիպելու ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի հետ, հեղինակի ներկայությամբ դիտելու նրա աշխատանքները։

...Ցուցասրահում խնամքով դասավորված նրա կտավները մի պահ մոռացնել տվեցին ամեն ինչ։ Ասես գույներ չլինեին այդ նկարներում։ Պատերից կախված շրջանակներից մեզ էին նայում մարդկային կենդանի դեմքեր՝ իրենց հուզումներով, ապրումներով...

Եվ այդ օրը ես հասկացա, որ Ռ. Խաչատրյանի գործերը ամենից ավելի ինձ գրավում են իրենց անմիջականությամբ, մարդկային էությունները բացահայտելու կարողությամբ։

ՎՈԼՈԴՅԱ ԶԱՏԻԿՅԱՆ
ԵրՊԻ-ի հաշվիչ տեխնիկայի ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող

ԱՇՏԱՐԱԿԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՑ

ԻՆՔՆԱԳՈՐԾ ԽՄԲԵՐԻ ՓԱՌԱՏՈՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Այդ երեկո Աշտարակի շրջանային մշակույթի տան բեմահարթակը տրամադրվել էր վոկալ-գործիքային ու էստրադային ինքնագործ խմբերի հանրապետական փառատոնի Աշտարակի փուլի մասնակիցներին։

Այստեղ էին հավաքվել Նաիրիի, Ապարանի, Արագածի շրջանների մշակութային տների ինքնագործ կոլեկտիվները։

Էստրադային երաժշտության երկրպագուները ջերմորեն ընդունեցին Աշտարակի շրջանային, Արայի պետական տնտեսության, Նաիրիի շրջանի Քանաքեռավանի, Նոր Երզնկայի, Արագածի Շամիրամ գյուղի մշակույթի տների վոկալ-գործիքային խմբերին։

Հանրապետության գիտամեթոդական կենտրոնը առաջին կարգի դիպլոմի արժանացրեց Նոր Երզնկայի մշակույթի տան վոկալ-գործիքային խմբին, 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմների՝ Աշտարակի և Արայի մշակույթի տների անսամբլներին։

ՍԻԱՆՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՎԻՐՎԱԾ ՆԱՍԻԲՅԱ

ԲԵՄԱԿԱՆԱՑՎՈ
Է ԲԺՇԿԻ ԿԵՐՊ

Երիտասարդ ռեժիսոր
Այդինյանը Նոյեմբերյանի
վրդական թատրոնում հա
տեսի դատին հանձնեց իր
րորդ աշխատանքը՝ հար
վացի դրամատուրգ Բրա
Նուշիչի «Գիտության զոհ
կու գործողությամբ կա
գությունը։ Մինչ այդ թա
սերները ջերմորեն էին
շնորհալի ռեժիսորի՝ Ջեխո
ռաջարկություն», «Հոբելյա
նեկենի «Ստախոս կինը»
տանքները։

Այժմ թատրոնի երիտ
կոլեկտիվը բեմադրությ
պատրաստում Սամվել Բե
նի «Մոմի լույսը» պիեսը,
նվիրված է բժիշկ Ն. Նա
կյանքին ու գործունեությ

Նասիբյանի ընկերները,
րագատները և բոլոր նրա
նաչողները անհամբերությ
սպասում այս ներկայացմ
րի բեմականացման աշխա
ներին մեծ օգնություն ե
տալիս բժշկի այրին՝
որդին՝ Մարտինը, որն այ
կոչալ Նասիբյանի անուն
շրջանային հիվանդանոցի
խավոր բժիշկն է և բոլոր
ավեր ճանաչել են ան
բժշկին։

Ս. ՍԱՄ
Նոյեմբերյանի շրջանայի
կույթի տան մե

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1980 Թ.

Г Авангард
15 окт 80 г
«Лицом к лицу
с художником»
встреча в мастерской
Володя Затикян

художник